

նկատմամբ կը գրէ Գրիգոր Դարանաղցի (298) թէ Մովսէս «յորժամ նստաւ կաթողիկոս, շատ բարեկարգութիւնս յաւելցոյց քան դառաջինն, որ արար ի վարդապետութեան ժամանակին. եւ զթիւ կրօնաւորացն բազմացոյց ի վանորայս եւ ի լերինս անսպատացն. եւ երիս վանս կուսանաց կանանց կարգեաց: Եւ հոգայր զամենայն պէտս եւ զկարիս նոցա. յառաջ զկանանցն հոգայր եւ ապա զարանցն. զի տկարք են եւ անճարակք եւ մուխաթարայք են, ասէր, ազգ կանանցն»:

Տկար սեռին դարձուցած այս ուշադրութիւնը արժանի է ամէն դրուատիքի: Յիշեալ երեք վանքերէն մէկն է անշուշտ Կարբուոյ Կուսաստանը, զոր կը յիշէ Նրեմիա Չէլէպի: Երկրորդն է հաւանօրէն Հալիճորի<sup>23</sup> եւ երրորդ Շնհէրի<sup>24</sup> կուսաստաններն ի Սիւնիս:

Մովսէս կաթողիկոսի վերանորոգչական այս գործունէութիւնը կ'ականարկէ յիշատակագիր մը, երբ կը գրէ խօսելով Մովսէսի մասին. «յորում ժամանակի կրկին լուսաւորեցան Հայք. քանզի նա բազում վշտաց եւ նեղութեանց համբերեալ՝ կրկին նորոգեաց զՄայր մեր՝ զԱթոռն սրբոյն Գրիգորի եւ վերստին նորոգեաց զեկեղեցի Հայաստանեայց. կարգեաց անապատս հինգս ի մէջ մեր ազգի, սիւն եւ հաստատուն պարիսպ մեր

<sup>23</sup> Հմմտ. Սիսական, էջ 257:

<sup>24</sup> Այս ինքն կուսանաց այն Անապատը, որ յետոյ 1676ին փոխադրուեցաւ ի Շնհէր. Սիսական, էջ 258—259: